Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 442-Ա որոշման

Ծ Ր Ա Գ Ի Ր
ԲՆԱԿԱՐԱՆԻ ԿԱՐԻՔ ՈՒՆԵՑՈՂ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ 16 ՏՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ»

1.	Ծրագրի նպատակը	Վանաձոր քաղաքում բնակարանի կարիք ունեցող ընտանիքների բնակապահովման խնդիրների լուծման նպատակով «Տարոն-4» թաղամասում 16 տիպային տների կառուցում:
2.	Ծրագիրը բարեգործական որակելու նպատակը	Ակնկալվում է բարեգործի խրախուսում և նախատեսվում է ծրագրի շրջանակներում, օրենքով սահմանված կարգով, օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով արտոնություններից: Հարկային արտոնություն է ակնկալվում միայն հիմնադրամի կողմից ներդրվող 160,000,000 դրամի չափով:
3.	Բարեգործը	«ԱՌՔ» բարեգործական հիմնադրամի ԱՄՆ-ի անհատ բարերարներ՝ 160,000,000 դրամ, Լոռու մարզպետարան՝ 50,000,000 դրամ
4.	Ծրագիրը կատարողը	«ԱՌՔ» բարեգործական հիմնադրամ (Երևան, Մամիկոնյանց 58-Ա, բն. 58, ՀՎՀՀ՝ 00218098)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետության, Լոռու մարզ, Վանաձոր, «Տարոն-4» թաղամաս. քաղաքաշինության բնագավառ
6.	Ծրագրի բյուջեն	210,000,000 դրամ
7.	Բարեգործություն ստացողը	Վանաձոր քաղաքում բնակարանի կարիք ունեցող ընտանիքներ, որոնց ընտրությունը կատարվելու է Լոռու մարզպետարանի կողմից ստեղծված համատեղ աշխատանքային խմբի կողմից:

8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2021 թվականի հունիսի 10-ից մինչև 2025 թվականի սեպտեմբերի 1-ը
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Շինարարական-կառուցապատման աշխատանքների իրականացում՝ 01.06.2021 թ. - 01.09.2025 թ., 210,000,000 դրամ: Կառուցվող տների արժեքի 50 տոկոսը շահառուների համար անհատույց նվիրատվություն է լինելու: Մնացած փոխհատուցվող մասը ընտանիքները բնակարամուտից հետո 10-15 տարվա ընթացքում վերադարձնելու են անտոկոս փոխառության կարգով: Վերադարձվող գումարները որպես շրջանառու միջոց օգտագործվելու են ծրագրի հետագա փուլերում:
10.	Ձեռքբերվող ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Շինարարական աշխատանքների իրականացում՝ 64,000,000 դրամ, նյութերի ձեռքբերում՝ 96,000,000 դրամ. Արտաքին կոմունիկացիոն գծերի իրականացում – 50,000,000 դրամ:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Ծրագրի իրականացման համար կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում: Ծրագիրն իրականացվելու է հիմնադրամի ընդհանուր ծախսերի հաշվին:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարան, որի միջոցներով իրականացվելու է արտաքին կոմունիկացիոն գծերի կառուցումը (շուրջ 50,000,000 դրամ), Վանաձորի քաղաքապետարան, որը ծրագրի իրականացման համար կառուցապատման նպատակով հողատարածք է տրամադրել:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված՝ բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Տ. ԱՎԻՆՅԱՆ

01.06.2021
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ